

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1037 Լ/Կ հրամանի

ԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Վանաձոր

2015թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Համալսարան) համացանցային պաշտոնական www.vsu.am կայքի (այսուհետ՝ Կայք) գործունեության նպատակները, գործունեությունը և Համալսարանի ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունները:
2. Կայքը Համալսարանի պաշտոնական էջն է համացանցային տիրույթում, գործառնվում է Համալսարանի լրատվության և տպագրության բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից:

ԿԱՅՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Կայքի գործունեության նպատակներն են.
 - Համալսարանի գիտակրթական գործունեության և ներքին կյանքի վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ իրազեկում.
 - Համալսարան-հասարակություն կապի սերտացում և ընդլայնում.
 - Համացանցային տիրույթում Համալսարանի իմիջի ձևավորում.
 - Համալսարանական կրթության գովազդում.
 - Համաշխարհային կրթական և գիտական նորություններին ուսանողության իրազեկում:

ԿԱՅՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4. Կայքի աշխատանքները անմիջականորեն ղեկավարում է Համալսարանի լրատվության և տպագրության բաժնի վարիչը:
5. Կայքի աշխատանքները իրականացնում է web-կայքի ադմինիստրատորը (կայքավար), որը Բաժնի միջոցով համագործակցում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ:
6. Կայքում իրականացվում են հետևյալ գործառնությունները.
 - 6.1 նորությունների բաժնի պարբերաբար թարմացում.
 - 6.2 նոր հայտարարությունների տեղադրում, հին կամ ժամկետանց հայտարարությունների հանում.
 - 6.3 Համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածում սոցիալական ցանցերում.
 - 6.4 Համալսարանի և ստորաբաժանումների վերաբերյալ նյութերի տեղադրում.
 - 6.5 Համալսարանի կառուցվածքի մասին ամբողջական տեղեկատվության հրապարակում.
 - 6.6 Համալսարանում տեղի ունեցող իրադարձությունների, այդ թվում՝ հանրապետական և միջազգային գիտաժողովների պարբերաբար և պատշաճ մակարդակով լուսաբանում.

6.7 Համալսարանի և ստորաբաժանումների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տեղադրում.

6.8 զանգվածային այլ լրատվամիջոցներում Համալսարանի մասին հրապարակված նյութերի տեղադրում.

6.9 վերը նշված նյութերի և տեղեկատվության տեղադրման ապահովումը եռալեզու տարբերակով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն.

6.10 Կայքի հարց-պատասխան բաժնի վարում.

6.11 Համալսարանի կանոնադրության, համալսարանական կրթությանն առնչվող ՀՀ և միջազգային իրավական ակտերի, ներհամալսարանական կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, ծրագրային փաթեթների, կրթական ծրագրերի քննությունների, կիսամյակային հարցաշարերի, դասացուցակների, ուսումնական ծրագրերի, ժամանակացույցների տեղադրում՝ դրանք համապատասխան բաժինների կողմից հասկացնելու դեպքում, դրանցից հին կամ ժամկետանց նյութերի արխիվացում կամ հանում.

6.12 Կայքի կառուցվածքային փոփոխությունների կատարում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱՑԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

7. Կայքում տեղադրվում են ինչպես Բաժնի կողմից ստեղծված կամ ձեռք բերված, այնպես էլ Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից տրամադրված նյութերը, տեղեկությունները կամ տվյալները:

8. Եթե անհրաժեշտ նյութերը, տեղեկությունները կամ տվյալները չեն հասկացվել Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից, բայց Բաժնին հայտնի է դրանց դրանց առկայությունը, ապա Բաժինը Կայքում տեղադրելու նպատակով Բաժնի վարիչի կամ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի միջոցով կարող է տվյալ նյութերը, տեղեկությունները կամ տվյալները կրողին առաջարկել դրանք ներկայացնել: